

Հինարարությունը ազգային տնտեսության կարելու ճյուղերից մեկն է, արտադրության ենթակառուցվածքի եւ շուկայի ենթակառուցվածքի բաղկացուցիչ, որի զարգացումը նպաստում է ազդում է տնտեսական աճի տեմպերի ու որակի վրա: Ժամանակակից պայմաններում շինարարական կազմակերպությունների տնօրեններին եւ ղեկավարներին ներկայացվում են նոր պահանջներ: Նրանք պետք է հստակ ձեւակերպեն շինարարական կազմակերպության արտադրա-տնտեսավարական եւ առեւտրային գործունեության նպատակները, վերլուծության հիման վրա ընդունեն որոշումներ, գնահատեն ձեւավորված տնտեսական իրավիճակը, ինչպես նաեւ որոշեն իրենց նվաճումների նպատակները: Զաջողության հասնում է միայն այն շինարարական կազմակերպությունը, որի կառավարող անձնակազմը կարող է ռացիոնալ օգտագործել իր ունեցած արտադրական ներուժը, պարզել արտադրական ռեզերվը, ապահովել շինարարական ծախսերի նվազեցումը եւ շինարարական արատադրանքի իրացումը, ձգտել, որպեսզի շինարարական արտադրությունում ներդրված յուրաքանչյուր դրամը ոչ միայն վերադարձվի, այլեւ բերի լրացուցիչ եկամուտ:

Հինարարությունում ձեռնարկատիրական գործունեության իրականացումը ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ գոնե նրան, ով պետք է կառուցի, այն, ինչը պետք է օգտագործեն շինարարության պրոցեսում, եւ այն, ինչի միջոցով պետք է կառուցեն: Նշանակում է ձեռնարկատիրական որոշակի գործունեության իրականացումը եւ դրված նպատակներին հասնելը պահանջում են բնական, մարդկային եւ մարդու ստեղծած որոշակի ռեսուրսներ:

Հինարարական կազմակերպությունում օգտագործվող բոլոր տեսակի ռեսուրսները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- Մարդկային ռեսուրսներ.
- ✓ աշխատանքային ռեսուրսները շինարարական կազմակերպության աշխատողների թվային կազմն է, ովքեր մասնակցում են արտադրական պրոցեսում՝ օգտագործելով իրենց ֆիզիկական հնարավորությունները, գիտելիքը եւ պրակտիկ փորձը: Իրականացվող կապալային աշխատանքների ծավալի վրա նրանց ազդեցությունը բնորոշվում է վարձու աշխատողների թվով, մասնագիտական որակավորման աստիճանով, աշխատաժամանակի օգտագործմամբ եւ նրանց աշխատանքի արտադրողականությամբ.
- ✓ ձեռնարկատիրական ունակությունը (ձեռներեցություն) ձեռնարկատիրոջ անձնային որակական կարողությունների, ունակությունների, հնարավորությունների ամբողջական կազմն է, որը նրան թույլ է տալիս գտնել եւ օգտագործել ռեսուրսների առավել արդյունավետ միացություններ եւ համակցություններ՝ նպատակ ունենալով հասնել նրանց օգտագործման արդյունավետ մակարդակի եւ շինարարական ար-

տադրության արդյունավետության: Մարդկային ռեսուրսների նման տարատեսակության յուրահատկությունը շինարարական պրոցեսում ցանկանալն ու կարողանալն է՝ ներդնել նոր տեսակի շինարարական արտադրանքներ, նոր տեխնոլոգիաներ, կազմակերպության առեւտրային գործունեության նոր ձեւեր, որոնք ռիսկային պայմաններում ուղղված են հաջողության հասնելուն: Իրականացվող կապալային աշխատանքների ծավալի վրա ազդում են շինարարական արտադրությունը կազմակերպելու եւ կառավարելու ձեռնարկատիրոջ հնարավորությունները:

✓ *Նյութական ռեսուրսները* բնափրային տեսք ստացած ռեսուրսներն են.

✓ *անշարժ (շենքեր, շինություններ) եւ շարժական գույք (շինարարական մեքենաներ, մեխանիզմներ, տրանսպորտային միջոցներ), իրականացվող կապալային աշխատանքների վրա դրանց ազդեցությունը որոշվում է գույքի կազմով եւ կառուցվածքով, շինարարական մեքենաների, մեխանիզմների, տրանսպորտային միջոցների օգտագործման էքստենսիվ եւ ինտենսիվ մակարդակով, վերջինների տեխնիկական վիճակով եւ կապալային աշխատանքների մեխանիզացման մակարդակով.*

✓ *շինարարական նյութերի, բնական (հումքային) նյութերի, էներգիայի, վառելիքի* ազդեցությունը իրականացվող կապալային աշխատանքների վրա որոշվում է շինարարական նյութերի, հումքի, էներգիայի, վառելիքի ապահովվածությամբ եւ դրանց արդյունավետ օգտագործման աստիճանով:

● Ոչ նյութական ռեսուրսները չունեն բնափրային ձեւեր եւ ներկայացվում են տարբեր տեսակի իրավունքներով: Այդ իրավունքների մեջ կարելու տեղ են գրավում մտավոր սեփականության իրավունքը, բնական ռեսուրսների օգտագործման իրավունքը:

● Ֆինանսական ռեսուրսները շինարարական կազմակերպությանը պատկանող եւ դրանում ներգրավված ֆինանսական միջոցների ամբողջականությունն է: Ֆինանսական ռեսուրսների ազդեցությունը իրականացվող կապալային աշխատանքների ծավալի վրա որոշվում է դրանց մեծությամբ եւ օգտագործման արդյունավետությամբ:

● Տեղեկատվական ռեսուրսները օրենսդրության, շուկայական դրոշմում տիրող իրավիճակի, խորհրդատվական ծառայությունների եւ այլնի մասին տեղեկատվությունն է: Արտադրական պրոցեսի հաջող կազմակերպման համար տեղեկատվական ռեսուրսները անհրաժեշտ նախադրյալներ են[1]:

Հինարարական կազմակերպությունը օգտագործում է այնպիսի բնական ռեսուրս, ինչպես հողը, որը ներկայացվում է որպես հողային տարածք շինարարության համար: Դրա բացակայությունը բացառում է շինարարություն իրականացնելու հնարավորությունը՝ անգամ մյուս բոլոր ռեսուրսների առկայության դեպքում: Ռեսուրսների ընդհանուր

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՅ՝ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հռիփսիմե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԵրճԵՊԳ
տնտեսագիտության
ֆակուլտետի
մագիստրանտ



հատկանիշ է արտադրության պրոցեսում դրանց մասնակցության հնարավորությունը, եւ դրանք տարբերվում են ինչպես նշանակությամբ, այնպես էլ օգտագործման ժամանակով: Դրանցից յուրաքանչյուրն ունի քանակական եւ որակական որոշակի բնութագրեր: Շինարարական արտադրանքի արտադրության պրոցեսը հանդիսանում է բոլոր տեսակի ռեսուրսների միավորումը մեկ ամբողջության մեջ[3]:

Շինարարական կազմակերպության տնտեսական եւ արտադրական գործունեությունը սկսվում է նյութական կամ ֆինանսական տեսքով ռեսուրսների ձեռքբերմամբ եւ ներգրավմամբ, ինչպես նաեւ աշխատանքային ռեսուրսների վարձմամբ: Ռեսուրսները, գտնվելով շինարարական կազմակերպության սեփականության մեջ, կազմում են նրա ունեցվածքը: Դրանց դա է ապահովում շինարարական կազմակերպության ինքնուրույնությունն ու հուսալիությունը: Առանց որոշակի ունեցվածքի՝ շինարարական կազմակերպությունը չի կարող իրականացնել իր տնտեսապարական գործունեությունը եւ ապահովել սպառողների պահանջ-մուկները: Շինարարական արտադրանքի նկատմամբ պարբերաբար մեծացող եւ փոփոխվող հասարակական պահանջմունքները ձեռնարկատերերին ստիպում են մեծացնել դրա արտադրությունը, իսկ դա պահանջում է ներգրավել լրացուցիչ ռեսուրսներ, սակայն բոլոր ռեսուրսները լինում են սահմանափակ քանակությամբ, ուստի՝ կարող են կիրառել ռեսուրսախնայողության մեթոդները: Վերջինները կոնկրետ տեխնոլոգիական հնարավորություններ են՝ կազմակերպական եւ այլ մեթոդներով ռեսուրսների ծախսերը տնտեսելու համար միավոր օգտակար արդյունքի վրա նոր ներդրումային համակարգի տարբերակով: Ռեսուրսախնայողության մեթոդները իրականացվում են կազմակերպատեխնիկական միջոցառումների միջոցով, օրինակ՝ ֆիզիկապես եւ բարոյապես մաշված տեխնոլոգիաների, մեքենաների, կազմակերպական նախագծերի, տնտեսական եւ մենեջ-մենթի այլ մեթոդների փոփոխությամբ: Ռեսուրսախնայողության գործոնը բարելավում է կազմակերպության գործունեության արդյունավետության ցուցանիշները, իսկ ապրանքների ռեսուրսատարությունը հնարավոր է կազմակերպատեխնիկական, ռեսուրսախնայողության ազդող գործոնների համալիրի մշակման եւ իրականացման արդյունքում[2]:

Ռեսուրսախնայողության գործոնների կիրառումը հանգեցնում է ռեսուրսների արդյունավետ օգտագործման: Դրա համար շինարարական կազմակերպության օգտագործած ռեսուրսների արդյունավետությունը կարելի է որոշել արտադրության արդյունքները բոլոր ռեսուրսների հետ համեմատելու հիման վրա, որոնք օգտագործվում են դրա արտադրության համար: Ռեսուրսների օգտագործման արդյունավետությունն ընդհանուր տեսքով կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

Ռեսուրսների արդյունավետություն = Արդյունքներ/Ռեսուրսներ [1]:

Շինարարական համալիրը, լինելով նյութական ռեսուրսների հիմնական սպառողներից մեկը, միաժամանակ հանդիսանում է երկրորդական շինարարական ռեսուրսների հիմնական մատակարար: Երկրի տնտեսության մեջ ռեսուրսների խնայողության ռազմավարությունը մեծապես որոշվում է երկրորդական շինարարական ռեսուրսների հիմնական մասի վերամշակումից հետո օգտագործման հնարավորությամբ, որպես նյութական միջոցների՝ նոր կառուցվող եւ գործող օբյեկտների վերակառուցման, շինարարական նյութերի, կիսաֆաբրիկատների եւ ելակետային հումքի արտադրության ժամանակ արդյունաբերության այնպիսի ճյուղերի համար, ինչպես մետալուրգիան, մեքենաշինությունը եւ այլն: Համաձայն տարբեր աղբյուրների տվյալների՝ բետոնի թափոններից խճաքար ստանալիս էլեկտրաէներգիայի ծախսը մոտավորապես յոթ անգամ ցածր է, քան բնական խճաքար արտահանելու ժամանակ: Նաեւ 25%-ով իջնում է երկրորդական խճաքարի հիման վրա ստացված բետոնի ինքնարժեքը, իսկ փորձերի վրա հիմնված հաշվարկները

ցույց են տալիս, որ երկրորդական շինարարական ռեսուրսների համալիր վերամշակումից հետո ստացված նյութերն օգտագործելով բարդ արդյունաբերական օբյեկտների վերակառուցման համար՝ ծախսերը նվազում են 10-12%-ով: Կարելի է նշել մի քանի միջոց, որոնք որոշում են երկրորդական շինարարական ռեսուրսների օգտագործման հիմնահիմքերը: Տարբեր օբյեկտների լրիվ քանդման, վերակառուցման, տեխնիկական վերազինման, արդիականացման ժամանակ անընդհատ աճում են երկրորդական շինարարական ռեսուրսների ծավալները, նրանց նյութական կառուցվածքի բարդությունը եւ անհամասեռությունը: Այսպես, ըստ Եվրոպական ստացիացիայի տվյալների՝ շենքերի քանդման ժամանակ ամեն տարի մոլորակի վրա առաջանում են ավելի քան 2.5 մլրդ տ շինարարական թափոններ, ճապոնիայում երկաթբետոնե թափոնների տարեկան ծավալը կազմում է շուրջ 400 մլն տ, իսկ Եվրոպայում՝ 180 մլն տոննայից ավելի[4]:

Շինարարության մեջ ներկա պահին աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումը առաջնային հարցերից մեկն է: Շինարարական կազմակերպություններում աշխատուժի օգտագործման կարտեոր գործոն է աշխատանքային ռեսուրսների կառավարման գործընթացը: Վերջին տարիների փորձը հաստատում է, որ շինարարությունում կառավարման նոր մեխանիզմներ որոնելու անհրաժեշտություն կա, որոնք կարող են ապահովել օպտիմալ մոտ պայմաններ, որպեսզի աշխատուժը ձեւավորվի, օգտագործվի եւ վերարտադրվի:

Վերջին տարիներին շինարարությունը եղել է հանրապետության տնտեսական աճի կարեւոր շարժիչներից մեկը, որի ծավալն ու աճի տեմպերն էապես խթանել են նաեւ տնտեսության այլ ճյուղերի զարգացումը: Սակայն վերջին շրջանում ոլորտում անկում է նկատվում, ինչը պայմանավորված է ներդրումների ծավալների կրճատմամբ, որն իր հերթին Հայաստանի տնտեսական գործընթացների վրա համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցության հետեւանքն է: Ստեղծված պայմաններում կարելի է պետության դերակատարությունը, պետության վարած քաղաքականությունը՝ տնտեսական աճը խթանելու համար, նոր աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ: Եվ անհրաժեշտ է, որ առավելագույնս օգտագործվեն այդ ոլորտի կարողությունները:

Օգտագործված գրականություն

1. Экономика строительной организации, Б.А. Пеплозян, Ер. 2004.
2. Производственный менеджмент, Р.А. Фатхунтдинов, Питер 2003.
3. Экономика строительства, И.С. Степанова, Москва: Юрайт, 2008.
4. www.stroi.ru/tsch/d963dr385614m428.html